ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ նշանավոր բանաստեղծ, քնարերգու Համո Սահյանի հիշատակը հավերժացնող հուշարձանը Օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածի շատրվանների հարակից տարածքում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ անվանի բանաստեղծ Համո Սահյանը ծնվել է Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Լոր գյուղում:

1927թ. տեղափոխվել է Բաքու, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը: 1935թ. ընդունվել և 1939թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը:

1939-41թթ. աշխատել է Բաքվի «Խորհրդային գրող» ամսագրում՝ որպես գրական աշխատող:

1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ծառայել է ռազմածովային նավատորմում:

1945-51թթ. աշխատել է Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրությունում՝ որպես գրական աշխատող, 1951-54թթ.՝ Երևանի «Ավանգարդ» թերթում՝ որպես բաժնի վարիչ, 1954-55թթ.՝ «Ոզնի» ամսագրում՝ որպես բաժնի վարիչ:

1965-67թթ. եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագիրը:

Հ. Սահյանի բանաստեղծությունները տպագրվել են դեռևս 30-ական թվականներից, սակայն նա համընդհանուր ճանաչման է արժանացել ռազմաճակատում գրած «Նաիրյան դալար բարդի» (1958թ.) բանաստեղծությամբ, որը հատկանշվում է Հայաստանի երկրի հանդեպ կարոտի հուզական բռնկումով և անմիջականությամբ:

Հ. Սահյանի առաջին գիրքը՝ «Որոտանի եզերքին» բանաստեղծությունների ժողովածուն տպագրվել է 1946թ., որում դրսևորվում է Սահյանի բանաստեղծական ընդհանուր ուղղվածությունը՝ սերը հայրենի բնաշխարհի և մարդու նկատմամբ:

Հայ անվանի բանաստեղծ Հ. Սահյանին հռչակ են բերել նաև «Բարձունքի վրա» (1955թ.), «Սեզամ, բացվիր» (1972թ., ՀԽՍՀ պետական մրցանակ), «Իրիկնահաց» (1977թ.), «Կանաչ-կարմիր աշուն» (1980թ.), «Դաղձի ծաղիկ» (1986թ.) ժողովածուները:

Նա գրել է նաև հայրեններ և կատարել է թարգմանություններ, մասնավորապես՝ Ա. Պուշկինի, Ս. Եսենինի, Գ. Լորկայի և այլ բանաստեղծների ստեղծագործությունները:

Համո Սահյանի ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում անցյալի, մանկությանը նվիրված բանաստեղծությունները, որոնք ունեն արդիական իմաստավորում, հասարարակական հնչեղություն:

Հայ ականավոր բանաստեղծ Հ. Սահյանը պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններով:

Հ. Սահյանը մահացել է 1993 թ.-ին, Երևանում:

1998 թ. հետմահու լույս է տեսել Հ. Սահյանի «Ինձ բացակա չդնեք» անտիպ բանաստեղծությունների ժողովածուն:

Համո Սահյանի հիշատակը հավերժացնող հուշարձանը Օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածի շատրվանների հարակից տարածքում տեղադրելու համար Երևանի

քաղաքապետին միջնորդություններ են ներկայացրել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տ. Բարսեղյանը և «Համո Սահյան ԳՄԿ» ՀԿ նախագահ Շ. Դավթյանը։

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Համո Սահյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Համո Սահյանի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին»» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ